№ 8 ԹԻՖՐԱՆ ՇԱԲԱԹ ՄԱՐՏ 11 1895 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՖՐԱՆ ՇԱԲԱԹ ՄԱՐՏ 11 № 8

«ՉԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 բուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 բուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՉԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՉԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչ 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անդամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ենիչերիներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մարաղայից. Նամակ Դավրէժից. Նամակ Սալմաստից. Նամակ Խմբագրութեան։ Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր ինտելիգենտները։

ԵՆԻՉԵՐԻՆԵՐ

Դավրէժից, Խոյից և մանաւանդ Սալմաստից և Ուրմիայից, ամեն օր մեզ հասնում են հետզհետէ տխուր, զայրացուցիչ լուրեր։ Ենիչերիական մի հայ խումբ, օրը ցերեկով, Ատրպատականի առաջնորդի քթի տակ, նրա տուած փիլոններում ապաստանած, կողոպտում են հայ գիւղացիների, կեղեքում նրանց, ծեծում ու բանտարկում, այն էլ յանուն կրօնի, յանուն բարոյականութեան և կրթութեան։

Հայերի մէջ յանուն այդ երեք սրբութիւնների, այդ աստիճան հարստահարութիւններ երբէք չեն եղել։ Սալմաստից եկած մասնաւոր նամակի կտորը որ տպում ենք այս համարում, Դավրէժից հասած լուրերը, որը նոյնպէս այս համարումն է և դեռ ևս այն բոլոր թշղթակցութիւնները որոնք դիպվել են խմբագրութեան մէջ, նոյնպէս և այն մի կոյտ դոկումենտների պատճէները, որոնք ուղարկուած են մեզ—այդ բոլորը հաստատում են և ապացուցանում, որ ենիչերական այդ խումբը--դժբաղտաբար մեծ մասամբ թիւրքահայերից կազմուած բաժանել են իրանց մէջ Ատրպատականի հայ գիւղերը, իրենց գլուխն ունին մի «կրթական» կոչւող տեսուչ, մի Վեհունի անուանուած աբեղայ և մի Գարեգին ասուած քահանայ և այդպէս, անխնայ կերպով աւարի են տալիս հայ գիւղերը, զէնքի ուժով կողոպտում են, բռնութեամբ թղթերի ստորագրել տալիս և իրենց յանդգնութիւնը այն աստիճանի են հասցրել, որ երբ հասարակութիւնները խմբական ձևով հրաժարեցնում են նրանց իրենց պաշտօնից, նրանք ատբրճանակների և կռուփների են դիմում և չեն կամենում այդպիսի հեշտութեամբ ծծւող աղբիւրներից պոկ գալ...

Ի՞նչ գործի վրայ է ուրեմն Ատրպատականի առաջնորդը, հարկաւո՞ր է արդեօք նրան կնքել այդ խմբի քաջալերող անունով։ Ի՞նչու լռել է նա և չէ ոչնչացնում իր՝ դէպի հայ գիւղերը ուղարկած այդ վայրենիներին, որոնք կանայք են ծեծում փողոցներում. ինչու է պաշտպանում այն «տեսուչ» կոչւող գծուծ արարածին, որ կրթութեան դրօշի տակ մտած՝ կեղտ ու վիշտ է արտադրում հայ գիւղերում. ինչո՞ւ փիլոնազուրկ չէ անում այն ֆոկուսնիկ քահանային որ Ուրմիոյ գիւղերի մէջ եղած խաւարը աւելի է թանձրացնում, ջուրը աւելի պղտորեցնում, նրա մէջ ձուկ որսալու համար...

Ինչո՞ւ է ուրեմն այդ առաջնորդը նստել Դավրէժում, իբր տիկնիկ, թէ իբր աղբիւր այդ բոլոր ենիչերութիւնների։

Չէ՞ որ այդ բոլորը կատարվում է ամիսներից ի վեր, արձակ—համարձակ, Էջմիածնից ոչ-շատ հեռու. և հայ գիւղացին, բաւական չէ նրա այլ բազմաթիւ ցաւերը, ոչ միայն կողոպտվում է հայ կղերից, «կրթութեան» անունով եկող աւազակներից, այլ և զէնքի ոյժի տակ՝ ստիպւած է իրեն կողոպտողների գովասանող թղթերի տակն անգամ ստորագրել։

Հովիւնե՞ր են դրանք թէ գայլեր, կրթական տեսուչնե՞ր են թէ ենիչերիներ...

Ա. Փ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԱՐԱՂԱՅԻՑ

15 փետր. 95

Պարսկաստանի քաղաքներից գրեթէ բոլորում, ուր կան շատ ու քիչ հայեր, ուր կայ առևտուր և առևտուրով պարապող պանդուխտ հայ վաճառականներ, նկատուել է միշտ մի սովորական երևոյթ։ Հայ երիտասարդ վաճառականների մեծ մասը հետաքրքրվում է այն հարցերով, որոնք ծագում են քաղաքում, հետևում են նրանց, մասնակցում են այդ հարցերի լուծման խնդրին և ազդում են հարցերի որոշ ուղղութիւն ստանալուն։

Պանդուխտ՝ մեծ մասամբ թաւրիզեցի հայ վաճառականները յաճախում են ընթերցարան, եթէ կայ, իսկ եթէ չ'կայ, ձեռներէցութիւն են յանձն առնում ընթերցարանի կազմակերպութեան, դրամ են մսխում և գործ առաջ տանում։ Հետաքրքրվում են և ուսումնարանական գործով, յաճախում են դպրոց. ըստ յարմարութեան օգնում են և բեմական գործին, ոմանք իրենց ունեցած ձիրքով և ոմանք դրամով։ Ցալիս են ներկայացումներ յօգուտ միորևիցէ բարի գործի և ամբոխին բարոյապէս կրթելու գործի հետ, մղումն են տալիս և տեղացի երիտասարդ ուժերի յառաջ գալուն։

Արտաբիլը, ուր կան մի քանի վաճառականական տներ, շնորհիւ պանդուխտ վաճառականների և մի քանի բարեմիտ տեղացի պարոնների, ունի ներկայումս կերանց սովորեցնի, բայց նա եկաւ, պսակուեց օժիտով կնկայ վրայ, առևտրական դարձաւ և մի քանի կոպէկ տալով մեզ կուրացրեց։ Այս միւսն էլ հասարակութեան փողով սովորեց և մեր աղջկերանց ուսում մատակարարելու տեղ, սիրային նամակներ գրելն է սովրեցնում. մենք կախ ենք անում մեր երկար ականջները.... Այս պարոնին էլ աղքատ ծնողները, կտրելով իրենց բերնի հացը և հագուստը մարմնի, ուսման ուղարկեցին, որ զայ իրենց ծերութեան գաւազան դառնայ և տան փոքրիկների խնամատարը. բայց նա քաղաքում չինովնիկ դարձաւ, հարուստ կին որսաց և կտրելով ծնողաց հետ յարաբերութիւնը, սկսեց վարել բուրժուայի կեանք. մենք նրա բարեկամութիւնն ենք փնտռում։ Մի խօսքով կոյր ենք դէպի նրանց պակասութիւնները որից խլ. ախուսուած նոքա էլ ամեն ինչ զոհ են բերում իրանց անձնական բաւականութեան, անձնական շահին։ Հէնց այդ կուրութիւնն է պատճառ, որ մեր մէջ, այժմ, «ինտելիգենտ» անուան փոքր ի շատէ մօտ մարդիկ չը կան, եթէ կան էլ, նրանց Դիոգինէսի լապտերով պէտք է որոնել, իսկ «ինտելիգենտ» անուանողների թիւը չափ ու սահման չունի։

Այս վերջինների թիւը շատ մեծ է, ինժեներներ, փաստաբաններ, բժիշկներ, գրողթղթակիցներ, սպաներ, քահանաներ և այլք, որոնք ընդհանրապէս մերձաւորի հաշուով ապրելը բնաւ ամօթ չեն համարում, որոնց ահագին մեծամասնութիւնը զուռող, մեծամիտ, սահմանափակ, լաւ զգացմունքներից զուրկ, եսական, ամեն քայլ հաշուով անող, պճնասէր, կեղծ ու փարիսեցի է։ Նրանց մէջ ամեն ինչ ճնշւած է «հարստանալու» «ապահովելու» ձգտումի առաջ և շատ քչերը կան որ «կնկայ օժիտը» օրէնք չեն համարում, որի եռեից ընկնում են առասպելական ցինիկութեամբ։ Գալիս է դիցուք Բաղու, ուսումն աւարտած մի երիտասարդ, և ինչ էլ կարծում, հէնց առաջին օրը սկսում է օժիտը որսալու։ Նա հարց ու փորձ է անում թէ ո՞ր աղջիկը, ո՞քան ունի (էլ ուրիշ յատկութիւններ նրան պէտք չեն), և, համեմատելով թւանշանները, առանց աղջկայ երեսն անգամ տեսնելու, խընամախօսներ է ուղարկում «ամենաշատի» մօտ (քաղաքի որ կորած անկիւնումն էլ որ լինի այդ մեծագումարը, կը գտնեն նրանց)։

Մերժումն ստանալով մի տեղ, նա բնաւ չի վհատւում, այլ միջնորդ է ուղարկում երկրորդի, երրորդի, չորրորդի մօտ.... Եթէ նրան այս քաղաքում չի աջողում իր իդէալին հասնելու, նա կրկին չի վհատվում, այլ թափ է տալիս կոշիկի թոզը և սլանում մի ուրիշ քաղաք, մինչև որ աջողութիւն է գտնում.... Փողով հարսնացուներին տարիներով են սպա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԻՆՏԵԼԻԳԵՆՏՆԵՐԸ

Այո, տայ Աստուած. իսկ առայժմ, մենք մեր պապերից հեռու չենք գնացել։ Նրանք կուրօրէն հաւատում էին հոգևորականութեան և իրենց էներգիայի մեծ մասը բանեցնում եկեղեցիների վրայ, իսկ մենք փոքր ինչ սառելով դէպի հոգևորականութիւնը, մեր բոլոր համակրութիւնը դարձրել ենք ուսումնականութեան տեղ՝ ուսումնականին։

Ինչպէս բաց էր մեր պապերի տունը հոգևորականութեան առաջ, այնպէս բաց են մեր առատաձեռնութեան ու բարեգործութեան տոպրակը այն ամենքի առաջ, որ ուսում ունեն։ Մենք տուել ենք նրանց շատ իրաւունք ու արտօնութիւններ. առաջին անծանօթի ձեռքը ջերմ սեղմում ենք և տանում մեր տները, առաջին անծանօթին յանձնում ենք մեր մասնաւոր և հասարակական գործերը, առաջին անծանօթին զովում, փառաբանում ենք և տալիս մեր աղջկերքն ու հարստութիւնը. անբարոյականին՝ բարձր բարոյական, իդիոտին՝ բարձր խելքի տէր ենք համարում ու հռչակում, որովհետև վկայական ունի և անուն ուսումնականի....

Անբարոյականութեան այն բարձր կէտին հասած բժիշկը, որ աղքատից փող չստանալու պատճառով ճղում ու դէն է գցում նրա համար արդէն գրւած դեղատոմսը, շարունակում է ընդունւած մնալ մեր մէջ... Ազգային փողեր մաքրազարդող խմբագիրը շարունակում է հրատարակել մատնութիւններով և կեղծաւորութիւններով լի թերթը և նրան ուղարկել ամեն կողմ առանց բաժանորդի պահանջման. մենք այդ տանում ենք... Այս միւսը կաշառքներ է վերցնում և լռում շատ սև բաների մասին և փոքր ի շատէ ազնիւ թղթակցի յօդուածները զամբիւղ շպրտում, մեզ համար ոչինչ... Այս պարոն գրողը հացկատակ է, և արևածաղիկի նման գլուխը այն կողմն է թեքում, որ կողմ արևն է՝ փողը... կարդում ենք նրան։ Այս մարդը խելքը կորցրած այրում է այն ամենը ինչին երկրպագութիւն էր տալիս. մենք գլուխ ենք խոնարհում նրան. այս միւսին արդէն կուռք ենք շինել և պատրաստ ենք ամեն մէկին քարկոծել, որ կը համարձակուի փաստերով ապացուցանել որ նա հասարակ մահկանացու է սովորական մեղքերով.... Այս ուսուցիչը քննութեան ժամանակ զեկավարվում է անձնական կրքերով և աշակերտին դասատնից դասատուն է փոխում ըստ չափու կաշառքի... ոչինչ։ Այս պարոնին հասարակական փողերով ուղարկեցինք համալսարան, որ վերջացնի և գայ մեր որդկերանց սովորեցնի, բայց նա եկաւ, պսակուեց օժիտով կնկայ վրայ, առևտրական դարձաւ և մի քանի կոպէկ տալով մեզ կուրացրեց։ Այս միւսն էլ հասարակութեան փողով սովորեց և մեր աղջկերանց ուսում մատակարարելու տեղ, սիրային նամակներ գրելն է սովրեցնում. մենք կախ ենք անում մեր երկար ականջները.... Այս պարոնին էլ աղքատ ծնողները, կտրելով իրենց բերնի հացը և հագուստը մարմնի, ուսման ուղարկեցին, որ զայ իրենց ծերութեան գաւազան դառնայ և տան փոքրիկների խնամատարը. բայց նա քաղաքում չինովնիկ դարձաւ, հարուստ կին որսաց և կտրելով ծնողաց հետ յարաբերութիւնը, սկսեց վարել բուրժուայի կեանք. մենք նրա բարեկամութիւնն ենք փնտռում։ Մի խօսքով կոյր ենք դէպի նրանց պակասութիւնները որից խլ. ախուսուած նոքա էլ ամեն ինչ զոհ են բերում իրանց անձնական բաւականութեան, անձնական շահին։ Հէնց այդ կուրութիւնն է պատճառ, որ մեր մէջ, այժմ, «ինտելիգենտ» անուան փոքր ի շատէ մօտ մարդիկ չը կան, եթէ կան էլ, նրանց Դիոգինէսի լապտերով պէտք է որոնել, իսկ «ինտելիգենտ» անուանողների թիւը չափ ու սահման չունի։

Այս վերջինների թիւը շատ մեծ է, ինժեներներ, փաստաբաններ, բժիշկներ, գրողթղթակիցներ, սպաներ, քահանաներ և այլք,

իւր կանոնաւոր երկսեռ դպրոցները, ընթերցարանը և բեմը, բաւական թուով բեմական հագուստների հետ։

Մարաղայում, ուր կան հարիւրի չափ վաճառականներ և որոնք, գրեթէ շատ քիչ բացառութեամբ, կրթուած և երիտասարդ ուժեր են, չ'են կատարում այն դերը, որ կատարում են իրանց եղբայրակիցները պարսկահայ ուրիշ քաղաքներում։

Սրանից մի երկու տարի առաջ կազմուեց մի ընկերութիւն, որոշուեց մի գրադարանապետ, որոնք պէտք է կառավարէին ընթերցարանը, աշխատէին նրա յառաջադիմութեան համար և օգնէին դպրոցին. բայց այդ ընկերութիւնն էլ դեռ չ'ծաղկած, թառամեց առանց մի արդիւնք տալու։

Դեռ մինչև օրս ոչ մի գլուխ կարծես չի մտածել այն ոյժի մասին, որ ունի բեմը ամբոխի վերայ և երբէք չի տրուել մի որևէ ներկայացում Մարաղայի պէս մի քաղաքում, ուր բացի հարիւրի չափ թավրիզեցի վաճառականներից, կան 200-ի չափ տեղացի բնիկներ։ Միայն վերջերս, շնորհիւ Տ. Տաճատ քահանայ Սրապիոնեանցի և ձեռներէցութեամբ պ. Մ. Մ. Սայեադեանցի, մտածել էին մի ներկայացման մասին, որ գլուխ բերին Վարդանանց տօնին։

Մենք մեր անկեղծ ուրախութիւնն ենք յայտնում գործի այդ սկզբնաւորութեան համար, միայն խորհուրդ ենք տալիս գործի ղեկավարներին, շատ էլ չ'սահմանափակուել յայտնի անձանց շրջանով և որքան կարելի է, գործին օգտաւէտ մարդիկ հրաւիրել, առանց մի որևէ անձնական հաշուի և բարեկամութեան։

Նամակիս վերջում, առանց բերկրանքի, չենք կարող յայտնել և այն, որ դոյն ներկայացման ձեռներէցները և օգնողները մտադիր են կազմել մի ընկերութիւն, իրենց հովանաւորութեան տակ առնել քաղաքիս ընթերցարանը, շարունակ ներկայացումներ տալ, և ներկայացմանց օգտով օգնել ընթերցարանին և դպրոցին, օգտից մասն յատկացնելով և բեմական պատրաստութիւններին։

Այդ առաջին ներկայացումը, լաւ թէ վատ, որպէս առաջին փորձ, մի լաւ և գնահատելի երևոյթ էր, որին շնորհաւորում ենք։

Նանի

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

27 փետր. 95

Կիրակի՝ փետր. 26-ին, Բերդաթաղի ս. Աստուածածին եկեղեցում, Ատրպատականի թեմական առաջնորդի ձեռքով քահանայ ձեռնադրուեց մի տգէտ խոհարար-տիրացու, Թաւրիզին մօտիկ Մուժամբար հայաբնակ գիւղի համար։

Չ'նայելով, որ գիւղացիների կէսը դէմ էր այդ խոհարարին քահանայեցնելու, բայց և այնպէս նա մեզ անյայտ պատճառով, ձեռնադրուեց։ Մուժումբար գիւղի Տէր-Մկրտիչ քահանան Թաւրիզի մի քանի աղաների և թերևս առաջնորդի ցանկութեամբ, յամառուեցաւ և չ'գնաց իր հօտը հովուելու, որովհետև Թաւրիզում եկամուտի աղբիւրներն աւելի իւղալի են քան աղքատիկ Մուժումբարում։ Եւ ահա նեղ կարիքից դրդուած, առաջին պատահող տիրացու համբակին քահանայական ծանր ու պատասխանատու պաշտօնը յանձնելով, ուղարկում են խաւար պարսկա-հայ գիւղը որպէս բարոյականութեան քարոզիչ, որպէս սրբազան կոչումն ունեցող աւետարանի առաքեալ... Նոր-ընծայ քահանան բացի այն, որ տգէտ է բառի լայնածաւալ նշանակութեամբ, նաև հասակն առած՝ աւելի քան 50 տարեկան մի ծերուկ է, որ ըստ եկեղեցական օրէնքի՝ մի քանի տարուց յետոյ միանգամայն անպէտք կը դառնայ քահանայագործութեան։ Եւ եթէ սրա վրա աւելացնենք և այն հանգամանքը, որ մինչև ձեռնադրութեան վերջին օրն էլ Թաւրիզի բողոքական միսիոնարների մօտ կատարում էր խոհարար-ծառայի պաշտօնը, այն ժամանակ կը ստանանք նոր-ընծայի լիակատար պատկերը իր բոլոր այլանդակութեամբ։ Պարտք ենք համարում յայտարարելու ի գիտութիւն «Շաւիղի» № 4-ի Ֆէլիեետօնէստի՝ որ նրա՝ Թաւրիզի առաջնորդին կտակած մէկ դիւժին տիրացուից մէկը, արդէն քահանայական գաւազանին և կոչմանը արժանացելէ։ Բարեմաղթենք որ շուտով մնացած 11-նէլ ձեռնադրուեն։ Թաւրեզի առաջնորդը—Արշէն երէցի այդ ստրուկ հետևողը—իր կատարած Աստուածահաճոյ գործը նուիրագործեց մի ընդարձակ քարոզով, որի մանրամասնութիւնները չենք ուզում առաջ բերել՝ խնայելով ընթերցողների համբերութիւնը։

«Շաւիղի» 4 համարի Ֆէլիեետօնը լաւ տպաւորութիւն է թողել այն ընթերցողների վրա, որոնք ծանօթ են Սալմաստի հանգամանքներին, տեսչին ու փոխանորդին։ Սակայն ափսոս, որ այդ ժողովրդային արդարացի բողոքի ձայնը ոչ մէկ ներգործութիւն չի ունենալու ոչ թեմական տեսչի, ոչ առաջնորդական փոխանորդի և ոչ էլ այդ երկու պատուհասների զօրեղ պաշտպան Թաւրիզի թեմական առաջնորդի վրայ։ Մէկ դիւական ծիծաղ, և ամեն բան կը վերջանայ որպէս չեղած բան...

Բերդաթաղում կազմուել է մի նոր կանանց ընկերութիւն, կարծէք մրցելու համար արդէն երեք տարի գոյութիւն ունեցող «Հայուհեաց» ընկերութեան հետ։ Սակայն այդ երկու ընկերութիւնների մասին մենք կը վերադառնանք մէկ քրիշ անգամ։

Դ.

ՆԱՄԱԿ ՍԱԼՄԱՍՏԻՑ

(Քաղուած մի մասնաւոր նամակից)

—

20 փետր. 95

... Մարդու սրտից կաթ կաթ արիւն է հոսում, երբ մօտից ծանօթանում է մեր թշուառ ժողովրդի դրութեան հետ, երբ տեսնում թէ ինչպէս անխիղճ կերպով կեղեքվում, հարստահարվում տանջվում է նա մի քանի՝ հարակական զորձչի դիմակի տակ թաղնուած անկուշտ գայլերից։

Ամենասառնասիրտ մարդն անգամ չէ կարող անտարբեր մնալ լսելով անպաշտպան ժողովրդի յուսահատ աղաղակները, նրա դառնագանգատները, որոնք, համարեա միշտ, վերջանվում են այսպիսի յուսահատական խօսքերով. «Էլ խերիք'ի (բաւական է), չափը (դանակը) խասիրի ոսկորին, տեղ չը կայ»։

Այդ մի քանի խօսքերը միայն բաւական պերճախօս ապացոյց լինելու, թէ Սալմաստի աշխատասէր խեղճ ժողովուրդը որ աստիճանի նեղուած հարստահարուած է։ Դարերից ի վեր հայ ժողովուրդը սովորել է ամեն տեսակ զրկանքների, նեղութիւնների, նա լուռ տարել է այդ բոլորը և միայն այն ժամանակ է բարձրացրել իր ձայնը յանուն իր բնաբարոյական մարդկային իրաւունքների, երբ իսկապէս լցուել է դառնութեան բաժակը, երբ «դանակը հասել է ոսկորին։»

Բայց ովքեր են նրանք, որոնց ձեռքին դարձել է խեղճ ժողովուրդը, որը ատում է նրանց, որովհետև զգում է թէ ինչ

սում, իսկ մինչև այդ, եօլա են գնում «էժանագին ապրանքներով»—վարձկան աղախիններով, որոնց շատ անգամ դուրս են շպրտում իրենց տներից յղի դրութեան մէջ, և կամ—նոյն իսկ մի քանի հատ «ապօրինի» երեխաներով....

Դիմում էք մէկին, միւսին, երրորդ ու չորրորդին թէ «ինչու պակվում էք միայն հարուստ հարսնացուների վրայ»։

—Սիրահարուած էի—պատասխանում է իւրաքանչիւրն առանձին։

Ա՜խ, բարեկամ, եթէ դուք հարուստների չէմքերը լակեյարար չը լիզէք և աղքատութիւնից չը խորշէք ինչպէս մահացու մեղքից, այն ժամանակ ծանօթ օրիորդների էլ շրջանը մեծ կը լինի. և կը սիրահարուէք ընտրութեամբ անկասկած նրա վրայ, որը աւելի բարեմասնութիւններով է օժտուած (արտաքին և ներքին) դուք բաւականաչափ զարգացած էք և այդ ակսիման գիտէք, բայց ամեն բարեմասնութիւնների գլուխ հարստութիւնն ընդունելով, պատում էք միայն հարուստների շուրջը և սիրահարվում... Սիրահարվում։

Երբ այդպէս խօսում էք, ընթերցող, պ.պ. «ինտելիգենտները» ձեզնից երես են դարձնում, հայհոյում և բամբասում ձեզ և եթէ դրանով բաւականանան, դուք ձեզ բաղդաւոր համարեցէք։

Դուք գրում էք մի յօդուած, որի մէջ թաւ-

նշաններով և փաստերով հրապարակ էք հանում մի բժշկի տգեղ գործերը, նա ձեզ հերքելու տեղ, սպառնում է ծեծել և վայը եկել տարել է ձեզ, եթէ թոյլ էք և զուրկ անձնապաշտպանութիւնից....

Դուք գրել էք մի փոքրիկ պատկեր, որի մէջ դուրս բերուած «ինտելիգենտը» համակրելի չէ, պ.պ. ինտելիգենտները հրապարակով քննադատելու տեղ ձեր գրածն ու ասածը, խրմբովին պախարակում են ձեզ, և մէկը քանդիմիսը հրէշաւոր ստերով աշխատում ցեխ կրպցնել ձեր անուան, վնասել ձեզ։

—Պ. ճարտարապետ—դիմում էք մէկին—հայոց գրականութիւնը ձեր ճարտարապետութեան հետ կապ չունի, հայոց գրականութեան մէջ ոչ մի աշխատանք չունէք, ձեր անունը առաջին անգամն ենք լսում, դուք «ճարտարապետի» ստորագրութեամբ վկայութիւն էք տալիս ձեր բարեկամին, որպէս ականաւոր հանճարեղ դրողի, դուք հայոց գրականութեան նոյն իսկ հոտը չէք առել, և ի նկատի էք ունեցել հասարակութեան խակութիւնը, որը «գովողը ճարտարապետ է, ուրեմն ճշմարիտ է գովածը» տեսլուց բարձր չէ իր քննադատութեան մէջ։ Ձեր արածը մի զզուելի բան է, եղեռնագործութիւն է, որին թոյլ տալ կարող է միայն փողոցային լկտիութիւնը։

Ճարտարապետը, եթէ ճար ունենայ, ձեզ կը պատասխանի։

—Պ. հրապարակախօս—դիմում էք միւսին—դուք գրիչը ծառայեցնում էք «հացին», մեծ մեծ խօսում էք, բղում էք շատ բարձրից, բայց աւազակապետ Նարուցն էլ անխիղճ էք վարվում ձեզ հետ գործ ունենալու դժբաղդութիւնն ունեցող խեղճի հետ։

Հրապարակախօսը գաղան է դառնում։

—Պ. ինժեներ—դիմում էք երրորդին—ուսանողական կասսային տասը տարի է փող էք պարտ չէք ուղարկում, իսկ ձեր տանը խընջոյքներ էք սարքում, ինչ անուն տանք ձեզ։

Կատաղում է պ. ինժեները։

—Պ. համալսարանական, դուք ծեր էք, 18 տոկոսով փողեր էք տալիս սրան նրան այն էլ գրաւով. ախր մեր հին վաշխառուն էլ, որին պախարակում էք, այդքան էր վերցնում, առանց գրաւականի. չէ որ, այդ անխղճութիւն է, աւազակութիւն է։

Արժէ քննել մեր բժիշկների, դեղավաճառների, նօտարների, փաստաբանների, ինժեներների և այլ «ինտելիգենտների» գործերը գաղափար կազմելու համար թէ ինչ պատուղներ են դրանք....

Ու կոյր հասարակութիւնը համակրում է դրանց։ Նրանց, որոնցից կազմակերպվում է մեր մէջ այն բուրժուա դասակարգը, որը նոյն իսկ կուլտուրական Եւրոպայի վերջն ու թոյնն է համարվում. նրանց, որոնք աւելի վտանգաւոր են քան մեր հին անկիրթ վաշխառուները, որ իրանց տգեղ պատկերը ծածկել չէին կարողանում և չրջապատող հասարակութիւնը նշանում էր, ատում ու հալածում։

Բայց շատ երկարացաւ։ Ընթերցող եղբայրներս, չինական աղքատ ու մշակ հայ, երբ գրում էք «ուսումովի» կեղտոտութիւնից, ուսումը երես մի դարձուր, ուսումը մեղաւոր չէ. մի ոյժ է, որ ում ձեռքն է ընկնում, նրան առիւծ է շինում. քո ջանին մեռնեմ, դու աշխատիր, կերածդ չոր հաց, բարձդ չոր քար, շինիր, գիշեր ու ցերեկ մի քնիր, և այդպիսի աշխատածդ մի խնայիր, տուր որդկերանումման, ուժեղացիր. պահիր սրտիդ բարութիւնը, բայց ոչխար մի լինիր. խօսքերով, նուններով, կոչումով ու դիրքով մի շլանքնիր իւրաքանչիւրի գործը և երբ տեսնես որ մէկը քեզանից վերցնում է և քեզ փոխարէնը ոչինչ չի տալիս, իմացիր, աւազակ նա, ատիր ու հալածիր նրան....

Այո, թոյլ մի մնա, ուժեղացիր եթէ ուզում շարունակ մնալ—քո ամենալաւ որդու ասածի նման—«Աչքից հեռացած, մտքից դուրս եկած, իրանք անլեզու» և որոնց «աշխատանիրաւ, անթիւ ու անբաւ դուխեց՝ ու կշտացաւ»....

Սարգիս Տէր-Զաքարեան

Բագու (Բալախանի)

պէս այդ վերջինները կատարում են իր վերաբերութեամբ անդութ դահիճի դեր, հետզհետէ ծծելով իր արիւնը և սպառելով կենսական ոյժերը։ Դրանք այն մարդիկն են, որոնց վրայ մի քանի ժամանակ առաջ նոյն այդ ժողովուրդը, ուշադրութիւն անգամ չէր դարձնում համարելով նրանց միայն արհամարանքի արժանի արարածներ. այն մարդիկը, որոնք քիչ առաջ լիզում էին նրա ոտները և հացի փշրանքներ մուրում իրենց թշւառ, ողորմելի գոյութիւնը պահպանելու համար. որոնք շրջում էին միշտ անհամարձակ, գլխիկոր, վիզը փորը գցած, սողում էին մեծի և փոքրի ոտների տակ և ստորութեան գնով ձեռք բերուած փշրանքներով պահպանում էին իրենց պարազիտային զզուելի գոյութիւնը։ Բայց այժմ։ Այժմ այլ ևս դուք նրանց չէք ճանաչի։ Նրանք այժմ շրջում են համարձակ, բարձրագլուխ, նրանք մի քանի թիզ այժմ բարձրացել են գետնից, գործում են համարձակ, նոյն իսկ յանդուգն։ Այժմ նրանք խրոխտում են այն ժողովրդի վրայ, որի առաջ մի ժամանակ քծնում, սողում էին։

Որտեղից այդքան կերպարանափոխութիւն և երբ։

—Այն օրից երբ նրանք իրենց ձեռքը ձգեցին հասարակական պաշտօններ, երբ ոյժ զգացին իրենց ձեռքում։

Հասարակական պաշտօնէութիւնը զէնք ունենալով իրենց ձեռքում, նրանք անպատիժ կերպով սկսեցին ծառայեցնել նրան որպէս յարմար միջոց իրենց ստոր շահասիրական նպատակներին գոհացում տալու համար։

Նրանց ագահութիւնը չափ ու սահման չէ ճանաչում և ոչ էլ խորութիւն է դնում միջոցների մէջ, որոնցով ծծում է ժողովրդի արիւն—քրտինքը և նրանով ուռճանում։

Տարիների ընթացքում երբ նրանք չունէին իրենց ձեռքում որոշ ոյժ, երբ սողում էին օտարների առաջ, նրանք կարող չէին ազատութիւն տալ իրենց ստոր բնազդումներին և հակումներին, բայց հէնց որ այս վերջինները նպաստող հանգամանքների շնորհիւ ազատութիւն գտան, դուրս ժայթքեցին վայրենի ոյժով և ագահութեամբ ընկան իրենց որսերի վրայ, վնասեցին և ապականեցին այն ամենը, ինչի որ դիպան։

Ակամայ հարցնում ես.մինչև երբ պիտի շարունակուին այդ բոլորը. մինչև երբ թշւառ ժողովուրդը տանջւի հասարակական անկուշտ ցեցերից, արդեօք նրա արդարացի բողոքները մի օր արձագանք կը գտնեն այն անձանց սրտում, որոնք իրենք եղել են այդ բոլոր թշւառութեանց պատճառը. նոքա դարձեալ կը շարունակեն փակել իրենց ականջները, երբ հարիւրաւոր բերաններ արդարութիւն և պաշտպանութիւն են խնդրում։

Այս խեղճ ժողովուրդը դարձել է կատարեալ գերի մի ինչ որ Արսէն աբեղայի և իր արբանեակների ձեռքում. որտեղ որ, ինչպէս ասում են, «ատամը փորը ինչ թաղվում է», վայ նրանց. համարեայ բոլոր գիւղերին իշխում է, բացի Ղալասարը.... Ես գիւրութիւն ունեմ մօտից, շատ մօտից ծանօթանալու խեղճ գիւղացիների վշտերին. նրանք բոլորն էլ գանգատվում են։ Կաշառքներ է որ առնում է, և առնում է ամենատոր, ամենակեղտոտ ձեռքով, ոյժի, բռնի ոյժի, հրացանի փամփուշտների ազդեցութիւնով... որտեղ հանդիպում է փոքր ի շատէ ընդդիմադրութեան, ոտերը տալիս է գետին և գոռում «Քեզ սպանել կը տամ»... Հաս—չը հաս անուան տակ, համարեա այս տարի որքան պսակ է եղել, բոլորից անամօթաբար կաշառքներ է առել և յետոյ պսակել։ Մի թարմ լուր, որից կարելի է եզրակացնել դրանց բռնած ընթացքը։ Տեսչի պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրացած լինելով, բոլոր գիւղերը (բացի Հաֆթվան և Փայաջուկ գիւղերը) դիմեցին Ղալասարին և խնդրեցին յայտնել տեսչին, որ այլ ևս չեն կամենում նրան, այնքան զզուել են։ Ղալասարցիք էլ իսկոյն մի մերժման ծանուցում գրեցին, ստորագրեցին բոլոր գիւղերի հասարակութիւնները (բացի Հաֆթվան և Փայաջուկը) և ուղարկեցին տեսչին, իսկ նոյնօրինակ մի խնդիր՝ առաջնորդին։ Տեսուչը վարդապետի և ուրիշ 6 հոգու հետ միասին զինուած՝ գնում են Հին-քաղաք, իջնում են հոգաբարձուների տները և հարցաքննում թէ ինչ իրաւունքով նրանք ստորագրել էին տեսչի արձակման թղթին. ի միջի այլոց՝ սպառնում են. «Մենք ձեր ստորագրութիւնը լիզել կը տանք»։ Հոգաբարձուներից մի քանիսը քաջութիւն են ունենում բացարձակ յայտնելու որ ստորագրել են, որովհետև այլ ևս չեն կամենում տեսչին։ Գլուխ չի դալիս, բռնի ոյժով նրանց ստորագրել են տալիս մի ուրիշ թղթի վրայ, որտեղ գովաբանած է տեսուչը։ Հոգաբարձուներից մէկը գնում է տուն, չը կամենալով ստորագրել այդպիսի թղթի բայց տեսուչը մարդ է ուղարկում նրա ետեից. այդ մարդը նրա Դաւիթ ծառան էր, որ հոգաբարձուի վրայ, օդի մէջ 3 գնդակ է արձակում, վախեցնում է, ետ բերում և ստորագրել տալիս։ Սխտխանայ գիւղն էլ հին-քաղաքի նման ստորագրել էր տեսչի արձակելու թղթին, բայց երբ գիւղացիք մի անգամ տանելիս են լինում իրենց մի մեռեալը թաղելու, նոյն հերոսը—Դաւիթը, յանկարծ կարում է յուղարկաւորների դէմը և փամփուշտը հրացանի մէջ դնելով,պահանջում է ստորագրել յօդուտ տեսչի։ Չեմ ուզում երկարացնել բոլոր այն խընդիրների մասին, որոնք այդ առիթով տեղացել են Դավրէժի առաջնորդարանը....

Այդպիսի սոսկալի դրութեան մէջ է այժմ Սալմաստը, ես կարծում եմ որ թերթերի մէջ կը գրեն այդ մասին....

(Խմբագրութիւնը ստացել է թէ Դավրէժից և թէ Սալմաստից ոչ միայն թղթակցութիւններ որոնք հաստատում են նամակագրի պատմածները, այլ և առաջնորդարան ուղարկած խնդրագրերի պատճէները, որոնք մանրամասնօրէն նկարագրում են Սխտխանցոց դէպքը և այլն)։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թէհրան 2 մարտ 95

Վերջապէս, «Շաւիղի» № 5-ում Վանաքայ եկեղեցւոյ հաշիւը տեսանք տպուած։ Դա հաշիւ չէ, այլ նախօրօք պատրաստուած մի ֆանտազիայ, որով երկու հաշուետեսք՝ քահանան և երեցփոխը կարողացան մանր թոզ փչել մարդկանց աչքերին և վերջ տալ տարաձայնուած խռովութիւններին։ Հաշիւ տեսնելուց մի քանի ամիս առաջ Եսայի սրբազանից նշանակուած հաշուատեսները երբոր երէցփոխից պահանջում են եկեղեցւոյ երեք տարուայ հաշուեցուցակը՝ հետևեալ պատասխանն է տալիս. «թէ՝ ես կարթցվոր չեմ, չեմ կարող հաշիւ գրել, գանձանակում ինչ որ կայ նա է»։ Երէցփոխը ասում է գրելու կարող չեմ, ուրեմն ինչպէս պատահեց որ երեք էջերից բաղկացած դաֆթարի երեսով հաշիւ ներկայացրեց ժողովրդին, հաշիւ, որը կարելի է մի քանի ժամուայ աշխատութեան արդիւնք համարել, և իւր ձևին ու դիրքին նայելով աւելի նման տէր Մարուքի ապառիկների ցուցակին, քան թէ մի եկեղեցւոյ երեք տարուայ հաշուետետրի։ «Շաւիղում» եկեղեցւոյ բալանսը կարդալիս տեսնում ենք իւրաքանչիւր տարուայ որոշ թուականը ու եկամուտը։ Մեր ընթերցողները գուցէ կը մտածեն որ այդ հաշիւն ու թուականները դուրս են բերուած կանոնաւոր հաշուետետրից։ Ոչ, այդպէս չէ, այդ բալանսում նշանակուած թուականները հաշվում են նրանից, թէ երեք տարուայ ընթացքում քանի անգամ են խաչը ջրից դուրս հանել, և դրա համեմատ էլ թուականներն են դրուած։

Դաֆթարում բացի մկրտութիւն և թաղման լուսագներից ուրիշ ոչինչի չենք հանդիպում, չէ որ ուխտաւորները առատ նուէրներով են կատարում իրանց մաղթանքները ս. Մինաս եկեղեցում. բա ո՞ւր են։

Իսկ եկեղեցապատկան իրեղէնների հաշիւը տրուեցաւ 40 տարի սրանից առաջ կազմուած մի ցուցակի երեսով, բայց հաստատուն աղբիւրներից լսում ենք որ ժողովուրդը, քաղաքացիք և շրջակայ գիւղացիք, իրենց նուէրները չեն խնայել ս. Մինաս եկեղեցուն տալուց։ Ամբողջ քառասուն տարուայ ընթացքում հազիւ մէկ կամ երկու անգամ հանդիպում ենք նուիրեալ իրեղէնների արձանագրութեան։

Այդպէս հաշուետուութիւնը աչքակապութեան է նմանում։ Հրաւիրում ենք ս. առաջնորդի ուշադրութիւնը։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուսաց պաշտօնական թերթերը հաղորդում են որ Թէհրանում ռուսաց պետական բանկի բաժանմունք բանալը վերջնականապէս վճռուած է։

—

Պետերբուրգից «Morning Post» թերթին հեռագրում են, որ հայոց Կաթուղիկոսը Պետերբուրգ չէ գնալու, այլ կը վերադառնայ նորից Էջմիածին։ «Մշակը» հաստատում է այդ լուրը, քաղելով ռուսաց «Նովոստի» լրագրից։ Ուրեմն հայոց վեհ. Կաթուղիկոսը մի պտոյտ միայն գործեց և ուրիշ ոչինչ։ Ինչ կասեն այդ պտոյտից շատ բան յուսացող պարոնները։

—

Թիֆլիզի թերթերը հաղորդում են որ վեհ. Կաթուղիկոսը Թիֆլիզից իր մօտ Բաթում է կանչել Խորէն եպ. Ստեփանէին նրա վիճակը որոշելու համար։ Նորից այդ մարդուն տանում—բերում են. մինթէ վեհ. Կաթուղիկոսը չէ կարողանում հասկանալ, որ այդպիսի եպիսկոպոսներին՝ իրենից անբաժան պէտք է պահել և ոչ թէ ուղարկել վանքերի մէջ փտեցնելու։

«Մշակը» հաղորդում է, որ Ալեքսանդրապոլի յաջորդ, երբեմն տիրացու և այժմ վարդապետ Տաղեանին, առաջարկուած է իբր Սինոդի անդամ։ «Մշակը» կատակ է անում. անհաւատալի և մի անգամայն հրէշաւոր է թւում մեզ այդպիսի լուրը։

—

Բոլոր հայ, նոյնպէս և Եւրոպական թերթերը, գովասանքով են խօսում Կ. Պոլսի այժմեան հայոց պատրիարքի մասին, իսկ Թիֆլիզի թերթերը ոգևորութեամբ։

—

Բաթումից մեզ գրում են։ «Վեհ. Կաթուղիկոսը այս քանի օր է, այստեղ է. շաբաթներով մնում է ճանապարհին պատահած քաղաքներում և շրջապատուած է հետևեալ անձերով—Սպանդար Սպանդարեան («Նոր-Դարի» խմբագիր) Աբգար Յովհաննիսեան («Արձագանքի» խմբագիր), Քաբամեան, Նահապետ աբեղա, Կարապետ աբեղայ և այլն և այլն... այդ տեսակ մարդիկ։

—

Թաւրիզից մեզ հաղորդում են, որ Սալմաստից, Սխտխանայի գիւղացիները մի բողոքագրով դիմել են Ատրպատականի առաջնորդին, որով բողոքում են Սալմաստի առաջնորդական փոխանորդի մի տգեղ վարմունքի դէմ։ Գիւղացիները մի ննջեցեալ դերեզմանատուն տանելու ժամանակ, նրանց առաջը կտրում է փոխանորդի զինուած ծառայ—ներկայացուցիչը և հրացանը ուղղելով դէպի յուղարկաւորները, սպառնում է սպանել բոլորին, եթէ իրեն առաջարկած թղթերը չեն ստորագրիլ, իսկ թուղթը տեսուչ Մ. Սաֆարեանին գովաբանելու համար էր։ Բացի այդ բողոքից, հաստատ աղբիւրներից լսել ենք, որ մէկ ուրիշ բողոքագիր էլ պատրաստել են և ուղարկել առաջնորդին, որով տեսուչին հրաժարեցնում են պաշտօնից։ Այդպիսի բողոքներ ուղարկուել են թէ Խոյից և թէ Ուրմիայից»։

—

Բազմաթիւ տեղերից ստանում ենք նամակներ, որոնք յայտնում են թէ մեծ համակրութեամբ են ընդունվում «Շաւիղի» մէջ տպուած «Ֆարրուղի» և «Նիշի» ֆելիեթոնները, իսկ Դավրէժում № 4-ը, ինչպէս գրում է մի թղթակից, «ձեռքից ձեռք խլելով և հետաքրքրութեամբ էր կարդացվում»։

—

Ներքից գրում են։ «Մեր բոլոր բողոքները, որ Եսայի սրբազանը ուշադրութիւն դարձնի և արգելի զանազան անձերի՝ վայելել եկեղեցապատկան տներն ու մինչև իսկ նրանց քարուքանդ անելը—մնացել է մինչև այժմ անլսելի։ Եպիսկոպոսը գրում է որ «չ'անէք», բայց անողները ծիծաղում են նրա գրածի վրայ և սկսել են այժմ տունը քանդել, նրա գերանները ծախելու համար»։ Լաւ է որ այդ աւազակները դեռ եկեղեցին չեն ծախել։ Եսայի եպիսկոպոսը սկսում է ցոյց տալ, որ Եւրոպայում կեանք վարած տարիները ո-

չինչ ազդեցութիւն չեն թողել իր վրայ։

—

Անցեալ օր, մարտ 8-ին, քաղաքս հասաւ Սպահանից, Սահակ վարդապետ Այվատեանը։ Ասում են որ նա կը մնայ Թէհրան, որպէս առաջնորդական տեղապահ. հետաքրքիր է թէ ո՞վ պիտի տայ նրան պէտք եղած մեծագումար ռոճիկը. Թէհրանը իր սուղ միջոցներով, թէ Սպահանը։ Լսում ենք, որ Սպահանը մտադիր չէ փող տալ այդ տեղապահին, քանի որ նա առանց էն էլ ռոճիկ է տալիս բուն առաջնորդին։

—

Մեզ խնդրում են հրաւիրել, վերջին անգամը լինելով, Գարվազա ղազվինի ընթերց. ընկեր. գրադարանի գանձապահին, հաշիւ տալու։ Գրադարանը թերթ չէ ստանում, գրքերը հնութիւնից բորբոսնել են, իսկ մարդ չէ իմանում թէ ինչ են եղել հաստատութեան փողերը. կա՞յ թէ ոչ։

—

Ազգ. Հայկազ. դպրոցի ուսուցիչները մեզ հաղորդում են Թէհրան հասնող վարդապետ Այվատեանի տգեղ մի քայլը։ Երբ ուսուցչական խումբը գնում է վարդապետին այցելութեան, նրան բարի գալուստ մաղթելու համար, վարդապետը որ այդ միջոցին շրջապատուած է լինում զանազան դերձակներով և ոսկերիչներով, ոչ միայն չէ բարեհաճում ներս հրաւիրել տալ նրանց, այլ մերժում է և ետ դարձնում։ Ցամենայն դէպս, մեր կարծիքով, ուսուցչական խումբը կատարել է իր պարտականութիւնը. զարմանում ենք միայն որ վարդապետը մոռացել է քաղաքավարութեան ամենատարրական օրէնքը, մանաւանդ որ ամենից աւելի նա պարտաւոր էր յարգանքով վերաբերուել դէպի հասարակական այնպիսի անձեր, որպիսիք ուսուցիչներն են։

—

Մեզ հաղորդում են Սպահանից, որ Եսայի արքեպիսկոպոսը, մարտ 4-ին, մեկնեց Հնդկաստան գնալու համար։ Այդ մասին եկած մի թղթակցութիւն կը տպագրենք յետագայ համարում։ Միայն տարօրինակը այն է, որ Սպահանի պէս մի բազմահայ քաղաք այժմ մնում է առանց առաջնորդի, որովհետև տեղապահ Այվատեան վարդապետը մտադիր է ընդ միշտ Թէհրան մնալ։ Այդ մասին եկող անգամ։

—

Թէհրանից. Ն. Շահբազխանեանը թերթիս մի օրինակ, սկսած № 7-ից, իբր նուէր թողած լինելով մեր տրամադրութեան տակ, այդ օրինակը յատկացնում ենք Սևանայ վանքի միաբանութեանը։ Նոյն տեղից, Արամեան ընկերութիւնը նոյնպէս մի օրինակ, № 7-ից, թողնելով իբր նուէր, այդ օրինակն էլ յատկացնում ենք Ալէքսանդրապօլում նոր բացուած կրօնաւորների գրադարանին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Մի սոսկալի նաւաբեկութիւն է տեղի ունեցել անցեալ ամիսներում Բրէմից Նիւ-Եօրք գնացող գերմանական մի շոգենաւի։ Ընդհարումից նաւը ընկղմում է 380 զոհ տանում ջրերի խորերը, հազիւ 20 հոգի են ազատել խեղդուելուց։

—Կ. Պոլսի թերթերը հրատարակում են պաշտօնական զեկուցում. Թոքաթէն յունվար 25 թուակիր հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ստեփան անուն անձը, զոր վիրաւորած էին հայ մասնախմբի հնոգ անձնէրներ որոնք անոր տան վերայ յարձակած էին 150 ոսկի առնելու նպատակաւ, մեռած է. միւս վիրաւորեալն ալ վտանգաւոր վիճակի մէջ է։ Այդ դէպքին հեղինակներուն նկատմամբ, որոնք ձերբակալուած են, հարկ եղած օրինական գործողութիւնները կատարելու վրայ են։

—Ֆրանսիայում, Մօնսօ-լէ-մինի հանքերում գրիզու գազի պայթիւն առաջանալով, կոտորել է շատ գործաւորներ. պատասխանատուութիւնը ընկնում է հանքը շահագործող ընկերութեան վրայ, որ ստիպել է գործաւորներին հանքի մէջ իջնել, գիտնալով որ գրիզուն պիտի պայթէր. բացի դրանից, հրդեհը հանգցընելու համար, ընկերութիւնը միջոցներ չէ ձեռք առել։ Ցառաջադիմական թերթերը պահանջում են խիստ պատիժներ հանքատէրերի համար, որոնք մարդիկների հետ վարվում են որպէս աննշան իրերի հետ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Լոնդոն. 12 մարտ Ն. Տ. Համայնքների ժողովում երեկ երեկոյ Սըր Բարթըլդը հարցրեց արտաքին գործոց նախարարութեան փոխ-քարտուղարին թէ մի որևիցէ քայլ առնուել է կառավարութեան կողմից այն համաձայնութեան վերաբերեալ, որ կայացել է Պեկինի և Ֆրանսիայի մէջ և որը վնասակար է անգլիական շահերին Նեղոսի հովիտում. նաև որ կառավարութիւն կը բարեհաճի արդեօք որևիցէ տեղեկութիւն տալ կետը. Աֆրիկէի գործերի մասին։ Սըր-Բարթըլդ յայտնեց որ Ֆրանսիան արդէն մուտք է գտել Նեղոսի հովիտում. Սըր Գրէյը ի պատասխան դրան յայտնեց որ այդ հարցի վրայ մեծ ուշադրութիւն է դարձնվում։ Լորդ Բոզբէրին դեռ տկար է։ «Times»-ը հրատարակում է իր Պեկինի թղթակցի մի հեռագիրը լուր տալով որ Չինաստանը Տոկիօի Միացեալ նահանգների դեսպանի միջնորդութեամբ, արդէն համաձայնել է խաղաղութեան սոյն կէտերի վրայ որն է 1) Կորէան ունենայ ինքնավարութիւն 2) վճարել Ժապոնիային պատերազմական ծախսերը։

Փարիզ. 12 մարտ. Մադագասկարից հասնող լուրերը հաստատում են որ Ֆրանսիական էկսպեդիցիայի երկու յառաջապահ խմբերը հասել են Մօջանգա։

Թիանցին. 13 մարտ. Չինական խաղաղութեան դեսպանները վաղը այստեղից կը մեկնեն Ժապոնիա գնալու համար։

Պետերբուրգ. 13 մարտ. «Նովաեայ Վրեմեայ» լրագիրը Թիանցինից հեռագիրներ է տպում, որոնք հաստատում են, որ Ժապոնը Չինաստանից պահանջում է որ վերջինս թողնի Մանչուրայի մասը մինչև Մուգտէ և Մեծ պարիսպը։ «Times» լրագիրը պնդում է որ Հօնգ-Կօնգում պաշտպանողական դիրք բռնելը կարևոր է, որովհետև արևելքում իրերի դրութիւնը այդ է պահանջում։

Լոնդոն. 17 մարտ. Մուշից եկած լուրերը յայտնումեն որ Սասունում պատահած դէպքերի համար կազմուած յանձնախումբը, որ դեռ Մուշումն է գտնվում, զգալի արգելքներ է գտնում տեղական իշխանութիւններից, իր գործունէութեան ընթացքում։ Հաւանական է որ յանձնախմբի երեք տէրութեանց ներկայացուցիչները այդ մասին մի ծանուցագիր ուղղեն Բ. Դռան։

Լոնդոն. 14 մարտ. Իսկական ոչինչ յայտնի չէ թէ Ժապոնացոց պահանջը ինչ է խաղաղութեան համար. մինչև իսկ պաշտօնական փորձերն էլ մասամասնութիւններ լուսաբանելու համար, ամեն տեղ ի զուր են անցել։

Վաշինգտոն. 13 մարտ. Կոլլօրադօի և Ուալսէմբրգի կատաղած ամբոխը լինչի ենթարկեց մի քանի իտալացիների, որոնք ամբաստանվում էին մարդասպանութեան յանցանքով։ Մի քանի իտալացիների գնդակահար անելուց յետոյ փողոցում, ամբոխը դիմեց դէպի բանտերը և այնտեղ գնդակահար արեց ուրիշ իտալացիների էլ։ Իտալական կառավարութիւնը գանգատեց Միացեալ Նահ. կառավարութեանը՝ այդ բարբարոսութիւնների համար։

Փարիզ. 14 մարտ. Ռուսաց աշխարհ. ընկերութիւնը և կառավարութիւնը մի էկսպեդիցիա են կազմել Աբիսինեա ուղարկելու համար կապիտան Լէոնտիեվի հրամանատարութեան ներքոյ։ Աբիսինեայի կղերականութիւնը մտադիր է մի շնորհաւորական պատգամաւորութիւն ուղարկել ռուսաց Կայսրին և աւելի լաւ յարաբերութիւն հաստատել Ռուսաստանի հետ։ Ժապոնեան կը պահանջէ որ Չինաստանը թողնի Ֆորմոզան։

Լոնդոն. 16 մարտ. Այստեղ ստացած հեռագիրը Սպանիական «Էլ Ֆէյնա Ռէժէնտա» զրահակիր նաւի մասին, յուսահատեցուցիչ է։ Հաւատացնում են որ նաւը չէ դիմացել փոթորիկների և խորտակուել է։ Ամբողջ Սպանիան տխրութեան և յուսահատութեան մէջ է։ Անգլիական թագուհին երէկ գնաց Նիս. շատ լաւ ընդունելութիւն է եղել։

Գահիրէ. 16 մարտ. Սէլէդդին բէյը, որ Մէհդիի բանտարկեալներից մէկն էր, փախել է և հասել Եգիպտոս։

Հերոշիմա. 16 մարտ. Ժապոնական ա. նախարար Կոնտ Իտօ և արտաքին գործոց նախարարը, գնացին Սիմոսակի, դիմաւորելու համար Չինական խաղաղութեան դեսպաններին, որոնք սպասվում են այստեղ։

Լոնդոն. 17 մարտ. Չինական կառավարութիւնը Ռուսաստանի և Գերմանիայի միջամտութիւնն է խնդրում Ժապոնիայի մի քանի պահանջների ընդդէմ։ Յայտարարվում է որ Սալլսդին բէյը, որ մի քանի տարիից ի վեր Սուդանում Մէհդիի գերին էր, փախաւ մի վաճառականի օգնութեամբ, որ կաշառել է աւստրիական կառավարութիւնից։ Յայտնի կատակաբան դերասան Կօրնէյ Գրէյը մեռաւ ինֆլուենցիայից։

Լոնդոն. 18 մարտ. «Թայմզի» թղթակիցը հեռագրում է Պետերբուրգից, որ ռուսաց խաղաղականի նաւատորմիղին հրամայուած է մտնել Ովկիանոսը և պատրաստ լինել որ և իցէ դէպքի համար։ Այստեղ հասած լուրերից երևում է որ Սպանական գնդերը ցրուել են Մէլլէլ կոչուող մուսուլմաններին՝ Մինդանաոյ կղզում, սպանելով 100 անձ, որոնց մէջը են սուլթանը և նրա որդին։ Սպանեացիք կորցրել են 18 հոգի. 190 վիրաւորուած։

Հռոմ. 18 մարտ. Լուր է հասնում որ Չինական կայսրը Ումբերտո թագաւորին մի նամակ է գրել, խնդրելով որ իտալացիք էլ օգնեն խաղաղութեան վերականգման խնդրում։

Նիւ-Եօրք. 18 մարտ. Հետախուզութիւնները են եղել կաշառակերութիւնների վերաբերմամբ և 25 ոստիկանական ամենաբարձր պաշտօնեաներ ամբաստանվում են դրանով։

„ՇԱՒԻՂԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Թէհրան. Ն. Ա. Ձեր այդպիսի յատկութեանը վրայ չենք զարմանում, որովհետև ապուշները հետաքրքիր չեն լինում։

Սուրէն Դավրէժի. ուղարկէք. եթէ լաւ եղաւ կը տպագրենք։ Եթէ գրուածքը 3 թերթից պակաս եղաւ և ապագրելու ոչ-յարմար, ձեռագիրը չենք վերադարձնիլ։ Ձեր յանձնարարութիւնը կը կատարենք։

Ռաշտ. Դ. Սարվարեանց. Ձեր վէպը, լինչպէս և նամակը չեն տպագրվիլ. երկուսն էլ յարմար չեն։ Նեղացել էք որ ձեզ չեն յայտնում այդ. խմբագրութիւնը պարտաւոր չէ ամենքին պատասխանել. յօդուած ուղարկողը պարտաւոր է մինչև 6 ամիս սպասել և ապա եթէ ուղարկած գրուածքը մեծ է, այն ժամանակ միայն հարց տալ։

Դավրէժ. Ընթեր. գրադ. ընկերութեան վարչութեան. Ցայտարարութեան գինը 5 դրամն 8 շահի է անում. կարող էք նամակագրոշմով ուղարկել։

Ուրմիա. Ց. Ուղարկեցէք ձեր խօստացած յօդուածը. շնորհակալ կը լինենք, միայն խնդրում ենք ամեն անգամ ձեր յօդուածների տակ ձեր բուն անունն էլ ստորագրել։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՐԱՖՖԻ
ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆ
Գինն է 20 կոպ.
Դիմել Թիֆլիս Կովկասեան գրավաճառանոցին և կամ հեղինակի այրիին։
Tiflis. Anna Raffi. 2—3